## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

14 օգոստոսի 2020թ.

# ՈՐՈՇՈՒՄ 25

**14 օգոստոսի 2020 թվականի**

ԴԱՎԻԹ ՍԱՄՎԵԼԻ ՇԱՀՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, 69-րդ և 70-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Լերմոնտովո համայնքի հողամասը աճուրդով վաճառելու մասին 14.08.2020 թվականի թիվ 1 արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Լերմոնտովո համայնքում 14.08.2020 թվականին կայացած աճուրդում հաղթող ճանաչված Դավիթ Սամվելի Շահմուրադյանին օտարել լոտ-1 06-043-0026-0003 ծածկագրով, 50-80% ավարտվածության աստիճան ունեցող 203.99քմ մակերեսով նկուղը, 575.47քմ մակերեսով անավարտ շինությունը և 0.25926 հա հողամասը՝ աճուրդում առաջարկված առավելագույն գնով՝ 1.790.975 ՀՀ դրամով:
2. Տասնօրյա ժամկետում վերը նշված գումարը վճարելուց հետո Դավիթ Սամվելի Շահմուրադյանի հետ օրենքով սահմանված կարգով կնքել գույքի առուվաճառքի պայմանագիր:
3. Հողամասի պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերը իրականացնել Դավիթ Սամվելի Շահմուրադյանի միջոցների հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 26

## ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 06-043-0010-0012 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 թ-ի թիվ 2387-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Պյոտր Իվանովիչ Տոկարեվին սեփականության իրավունքով պատկանող 06-043-0010-0012 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին /բնակելի տուն/ տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝

**ՀՀ Լոռու մարզ Լերմոնտովո համայնք, 2փ. թիվ 73** :

2.Անշարժ գույքի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով, որը ենթակա է գրանցման ՀՀ ԱԳԿՊԿ-ի Վանաձորի տարածքային ստորաբաժանումում:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

20 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 27

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ "Բյուջետային համակարգի մասին" օրենքի 33-րդ հոդվածի և առաջնորդվելով Լերմոնտովո համայնքի ավագանու 20/08/2020 թ-ի "Լերմոնտովո համայնքի 16/03/2020 թ-ի թիվ 09-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին" թիվ 23-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Լերմոնտովո համայնքի 2020 թ-ի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը:

2.Հաստատել համայնքի ենթակայության բյուջետային հիմնարկների 2020 թ-ի ծախսերի նախահաշիվները ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԷԴԻԿ ՉԱԽԱԼՅԱՆ**